

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի,
վաճառքի համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մեջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԵԼԵՓՈՆ № 253:

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւնները ընդունուած է ամէն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:
ՏԵԼԵՓՈՆ № 253:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1896 ԹԻՒԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

24-րդ ՏԱՐԻ

24-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐԻ

Հրատարակում է Թիֆլիսում, Նոյն գիրքով, Նոյն պրոգրամայով և Նոյն ուղղով
Թեմայով: Մերք ստանում ենք սեփական հեռագիրներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՇԱՐԿՈՒՆԱԿՈՒՄ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ մասնատանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և
մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսակա-
նը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է թիֆլիսում և Բաղրամյան և Բարձրակայան փողոցների անկիւնը:
Կայտարարութեան ուղիք քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», Խմ-
բարտատնային՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Մշակ» խմբագրութեան կողմից: Արհամար-
հանքի արժանի մասնով, էֆէնդիները գրվել են
բարձրագոյնով: Օգնականներ տեսարան: ՆԵՐԿԱՅ
ՏԵՄՈՒԹՅՈՒՆ: Ամօթ է Մի նկատողութիւն. Նա-
մակ Ալեքսանդրովից, Նամակ Ղուբայից, Նա-
մակ Ալեքսանդրովից, Ներքին լուրեր: ԱՐՄԱՔԻՆ
ՏԵՄՈՒԹՅՈՒՆ: Վերջին տեղեկութիւններ. Նամակ
Թիֆլիսից: ՀԵՐԱՅԻՆՆԵՐ: ԲՈՐՈՍ: ՅԱՅՏԱ-
ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ: Գրական և
քաղաքական:

«ՄՇԱԿ» ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԵՏ

1895 թ. «Մշակ» 104-րդ համարում,
սեպտեմբերի 12-ին, և 137-րդ համա-
րում, նոյեմբերի 28-ին, յայտնված էր, որ
1896 թ. յունվարի 1-ից «Մշակ» կը
հրատարակվի շաբաթը չորս անգամ:

Անցեալ օրը, յունվարի 13-ին, մենք
ստացանք Պետերբուրգից պաշտօնական
հեռագիր այն մասին, որ «Մշակ» հը-
րատարակելի լինելը չորս անգամ հրա-
տարակելու վերաբերմամբ մեր ժամ է:
Նոյն պաշտօնական թղթով յայտարա-
րեց մեզ և Կովկասեան ցեղօրական կոմի-
տեայ երէկ, յունվարի 14-ին, № 119 դը-
րովեամբ:

Այդ պատճառով «Մշակ» խմբագրու-
թիւնը յայտնում է ի գիտութիւն բոլոր
բաժանորդներին, որ «Մշակ» պէտք է հրա-
տարակվի շաբաթը երեք անգամ միայն:

ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՆ

Գիրքական աղբյուրներում այն մասը, որ
դեռ չէ դուրս եկել նահապետական կեցութեան
և սովորութիւնների շրջանից, ունի իր որոշ
աշխարհայեցողութիւնները առանց և հասա-
րակական կեանքի մասին լինել փորձէ հեռա-
դուրէ այդ հասկացողութիւնները, զոր կը տես-
նէք ձեռնարկած բարոյական կանոնադրութիւն
անգամ: Բայց այդպիսի փողովորը բարձր, վե-
րացական գաղափարներ և հասկացողութիւննե-
րի հետ գործելու ինչպէս և հին ժամանակ-
ներում, ձեր, առարկան, ձեր մարմնացում են
այն հասկացողութիւնները, որոնք մշակվել են
դարերի ընթացքում կրօնի, բարոյականութեան,
պաշտամունքների և անուրիութիւնների վերաբե-
րմամբ: Ամուսնական խորհրդի մէջ ծածկված բա-
րոյական մեծ միտքը նա տեսնում է նարոտի
մէջ. նա գիտէ, որ իւրաքանչիւր մարդու տես-
նում է արժանաւոր այդ նարոտին, գիտէ որ
այդպիսիք է սկսում ընտանեկան կեանքի եր-
ջանութիւնը: Խորհուրդը իր բոլոր նրբութիւն-
ներով անմատչելի է նրա հասկացողութիւննե-
րին, իսկ օրհնած նարոտը—մի սրբութիւն է,
որին նա մտնում է երկրպագութեամբ, հաս-
կանալով թէ ինչ և ինչ պահանջներ ունի նա:
Իսկ ինչ է ամուսնական կեանքի վերաբե-
րում նահապետական հասկացողութիւնների մէջ:
Նա անհատական երջանկութեան աղբիւր չէ հա-
մարվում: Եթէ կամենում էք ճիշդ իմանալ,
մեր փողովորը աչքում սէքը, մանաւանդ երբ
նա արտայայտվում է բացարձակ, հրապարակ
վրա, յանցաւոր մի բան է համարվում, անմո-
թութեան համարի մի երեւոյթ, որ անմարդ
սրտերում է բոյն դնում: Այսպէս էր և ամուս-
նութեան հիմքը: Գողովորը բացարձակապէս
ցոյց է տալիս—տան ամբողջութիւնը, բարոյու-
թիւնը: Այդ միտքը վերլուծական վերլուծում
ներով նա, ի հարկէ, ձեռք չի բացատրել, բայց
ցոյց կը տալ ձեռք իր պաշտամունքը, որ մարմ-
նացում է այդ հասկացողութիւնը: Այստեղ ձեր,
նրա թէ օջախն է, այն տեղը, ուր կրակ է
վառվում, հաւաքելով իր շուրջը ընտանիքի ան-

ԱՐՄԱՔԱՆԱԿԱՆ ԱՐՄԱՐՈՒՄ

Երբ խօսում էք գրական շնորհի, ան-
բարոյականացող մամուլի մասին, սովորա-
բար լսում էք այսպիսի խօսքեր: «Ինչո՞ւ
չէք կուտում, ինչո՞ւ չէք մերկացում»:
Այդ չէ ուղեւորում, որ գրական ասպա-
րէզը—կուտ կաշի է: Բայց չը պէտք է
մոռանալ, որ կաշի կուտ մի յայտնի չափ,
մի յայտնի սահման, որից անցնելը աննե-
րկելի է նրա համար, ով ամեն գործու-
նէութեան հիմնաքար է ընդունում մար-
դութիւն, ազնուութիւն:

Տպագրական խօսքի պայքարը կարող է լի-
նել միմիայն հասկացողութիւնների, ուղղու-
թիւնների շուրջը: Կուտ երկու հակառակ
ուղղութիւններին հետեւող լրագրիւնների մէջ
բնական է, անխուսափելի է նոյն իսկ
հարկաւոր: Բայց ի՞նչ պայմաններ մէջ:
Կաշի գրական ասպարէզի պատիւ, կաշի գրա-
կան էթիկայ: Գրանք պարտաւորական են
ամենքի համար, որոնք խօսում են հասա-
րակութեան համար և հասարակութեան
անունից: Հայեացքները կարող են ընդհար-
վել, սկզբունքները կարող են միմեանց հեռ-
անհաշտ լինել: Կարծիքների ազատութիւնը
—դա մամուլի հիմնաքարն է, և ամեն
մէկը իրաւունք ունի պաշտպանել իր կար-
ծիքը, իր հայեացքները: Եւ կուտ հա-
րաւոր և ցանկալի է այդ իսկ սահմաննե-
րում:

Բայց ի՞նչ կասէք, երբ մամուլը կորց-
նում է իր պատիւը, դառնում է մի զրու-
նի այլանդակութիւն, որին հասել է խա-

ւարմիտ մամուլը թէ հայերի մէջ և թէ
առհասարակ: Դուք վիճում էք նրա հետ:
Դուք, օրինակ, մի շարք յօդուածներով
ցոյց էք տալիս թէ ձեզ համար չը կայ
անհասկացողութիւն, այլ կայ սկզբունք միայն:
Պէտք էր որ շրջին ձեր կարծիքը, պէտք
էր որ ցոյց տային թէ այդ այդպէս չէ:
Բայց ի՞նչ են անում: Հերքել չեն կարողա-
նում, այլ կոտնական անպատկառ ձեռ-
նով տարիների ընթացքում միշտ մի և
նոյնն են կրկնում թէ ինչու դուք չէք
երկրպագում նրանց, որոնց գործը հեր-
քում է սկզբունքը, որոնք ջանջալուծում են
այն հասկացողութիւնները, որ դուք ու-
նէք մի յայտնի գործի կամ պաշտօնի վե-
րաբերմամբ:

Վերցրեք մի ուրիշ օրինակ: Տարիների
ընթացքում դուք հալածում էիք մի ա-
նարժան հոգեւորականի, դնէք նոյն իսկ
մի Աշխատանքի: Բայց մի ուրիշ թերթ այն-
քան մեծ արժանաւորութիւններ էր տես-
նում նրա մէջ, որ սպում էր նրա պատ-
կերը, դուրսանքներ էր շուրջում նրա հա-
ցէին, նոյն իսկ կաթողիկոսական թեկնա-
ծու էր հրատարակում: Եւ երբ այդ անձը
հեռացաւ պաշտանից, երբ նա այլ ևս ան-
կարող էր մի երկու ժամում պատգամաւո-
րութեան պաշտօն պատրաստել, այն ժա-
մանակ միայն նա շողորթութիւն մամուլից
ստացաւ իր իսկական անունը: Կարող էր
երեւակայել թէ անաթթութիւնը այն յան-
դգնութեան կը հասնի, որ մի օր Աշխա-
տանքի պատրաստութիւնը ոչնչացնող մարդիկ
Աշխատանքի երկրպագութիւնը կողմից կը
հաշակվեն իրքը և կողմնակից և խոր-
հրակից Աշխատանքի:

Այդպիսի շահատակութիւններով մա-
մուլը ընկնում է, դառնում փողոցային:
Կորցնելով ամօթ ու պատիւ, նա սկսում է
մի գլուխ ստել, զրպարտել, կրկնել հրա-
պարակում նոյն ստոր բամբասանքները, ո-
րոնք յօդուածում են փողոցների անկիւննե-
րում մոլթ և անբարոյական անհասկացու-
թիւնների ձեռքով: Դուք կարող էք խօսել
ձեր սկզբունքների անունով, բայց անպա-
տիւ մամուլը կաղաւաղէ ձեր միտքը, տակն
ու վրա կանէ ձեր ասածները, մի խօսքով
կը գործադրէ այն բոլոր միջոցները, որոնք
ձեռնուում են գրական սրկայութեան, և
լուսանքներ մի հերքել կը թափէ ձեզ
վրա:

Միտքը հերքել ոչ թէ մտքով, փաստին
դէմ դնել ոչ թէ փաստ, խօսել ոչ թէ մի
բան հասկացնելու, մի հայեացք պաշտպա-

դանքներին: Այդ անունը—օջախ—ընտանեկան
սրբութիւնն է, ընտանիքի պատիւը, Դա մի
պաշտամունք է, մի մեծ հասկացողութիւն: Երբ
օրհնում են մի օջախ, նշանակում է, որ օր-
հնում են ընտանիքի մարտկոցները, գեղեցիկու-
թիւնը: Ծանր մեղք, սրբապղծութիւն է համար-
վում օջախը հայհոյելը: Ընտանիքի իւրաքանչիւր
անդամը պիտի նախանձանքիւր լինի օջախի
պաշտպանութեան: Այդպիսիք պիտի մարդը, ա-
նարատ կենցաղապարութեամբ հաստատեն, որ
օջախը, ընտանեկան սրբութիւնը գեղեցիկ կեր-
պով պահպանում է բարոյական հասկացողու-
թիւնները իր շուրջը բարեկեցիկ մէջ, իսկ
երիտասարդները պիտի հասկանան, որ այդ օ-
ջախը վառ պահելու համար հարկաւոր է ամուս-
նութիւնը:

Այն այն գլխաւոր հիմքը, որի վրա դրված է
նահապետական ամուսնութիւնը: Նա ունի իր
խիստ և անողորմ պահանջները: Օջախի տիրա-
պետութիւնը բացարձակ է, անսահման: Նրա
առաջ չը կայ անհատական, անհատական երջան-
կութիւն, ամեն ինչ պիտի դնվի նրա բարօրու-
թեան համար: Երբ նորահարսը առաջին անգամ
մտնում է օջախին, այդ րօպէից նա պիտի

նշու համար, այլ լոկ սրկայական քրքիջ-
ներով ծաղրելու մտքով—դա արդէն մի
այնպիսի միջնակայ է, ուր կարող է ապ-
րուստ գտնել միայն անպատիւ, ապական-
ված մամուլը: Հասնել այնտեղ, ձեռք տալ
այդ նեխված ապականութեան այլ ևս չի
թոյլ տալ իրան ոչ ոք, ով սիրում է մար-
դութիւն, ով չէ կորցրել զգուսնքի զգա-
ցումը:

Ի՞նչ է մնում անել:
Պատմում են, որ Գեօթէի, բարեկամներից
մէկը դանդաղում էր, որ իրան հալա-
ծում է փողոցային մամուլը, ամեն տեսակ
կեղտոտութիւններ է թափում իր վրա:
Գեօթէ միշտ խորհուրդ էր տալիս իր
բարեկամին ուղարկութիւն չը դարձնել և
անտես առնել: Բարեկամը համոզվեց և հե-
տեւում էր այդ խորհուրդներին մի օր
ասաց. «Նա լուծում եմ և կը խօսեմ միայն այն
ժամանակ, երբ իմ թշնամիները կը համեն
այն տեղին, որ կը տպեն իրանց լրագրիւն-
րում թէ ես ճաշկերպութիւն ժամանակ դողացել
եմ արժաթի դրանք»:
«Նոյն իսկ այդ
դէպքում էլ խորհուրդ չեմ տալ պատաս-
խանք», նկատեց Գեօթէ:

Թշուառ, ողորմելի է այն մամուլը, որ
այսպիսի դրութեան է հասնում: Եւ նրան
ոչնչացնելու ուրիշ աւելի լաւ միջոց չը կայ,
բացի այն միջոցից, որ հանձնարեց բանա-
ստեղծել էր առաջարկում—արհամարհանք,
և միմիայն արհամարհանք:

ԷՖԷՆԻՆԵՐԸ ԳՈՒՈՒՆ ԵՒ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Կ. Պօլսի մեր թղթակցի հաղորդածը այն մե-
քենայութիւնների մասին, որոնք լարվում են
Նուբեանի, Աբրահամ փաշայի և Ունեանի մի-
ջոցով իզմիրեան պատրիարքի դէմ, ճշգրտում է
կարգական մամուլին հասած տեղեկութիւննե-
րով:

Այն ինչ են գրում Կ. Պօլսից «Politische
Correspondenz» լրագրին, «Յունիսի» 2/14-ին
նշանակված էր հայոց կրօնական և քաղաքական
փողովների նիստը, որին մի առանձին նշանա-
կութիւն են տալիս, որովհետեւ այդտեղ պիտի
քննվէր մի բանի հայ պաշտօնականների բերած ա-
ռաջարկը՝ իզմիրեան պատրիարքին հրաժարեց-
նելու մասին:

Մեր թղթակցից մի առ մի յիշատակելով այն
էֆէնդիների անունները, որոնք մի այդպիսի
եւրեւելի գործի գլուխ են կանգնել, աւելացնում է
և այն, որ դրա համար մի յատուկ յանձնաժողով
հրաժարվի իր հետ-ից, պիտի ուրանայ իր ան-
ձը, իր զգացմունքները և միայն պիտի հասկա-
նայ հու. հպատակութիւն այդ օջախին, անհա-
նուէր երկրպագութիւն նրա կարգերին ու պա-
հանջներին: Տղամարդը պիտի դրսում աշխատէ,
նա հանգիստ ու դադար չունի, նրա պարտքն է
ընտանեկան օջախը միշտ պայծառ պահել, միշտ
սուրբ: Բայց նրա պարտաւորութիւնները այն-
քան շատ չեն: Նա, որ միշտ գտնվում է այդ
օջախի մօտ, աշխուժ կիւն, մինչև իր կեանքի
վերջը պիտի ծառայէ, պիտի պաշտէ և իր ամ-
բողջ կարողութիւնները պիտի նուիրէ միայն
օջախին:

Այդ որոշ և խիստ պահանջների մէջ չէ կա-
րող լինել ամուսնական սիրոյ, համբալիսու-
թեան սկզբունքը: Ընդհակառակը, այդ սէրն ու
համբալիսութիւնը թէ չեն չաղկապված օջախի
պաշտամունքի մէջ, համարվում են վատ, անհա-
մակընդի բան: Մեծ մասամբ չը կայ, ի հարկէ,
սէրը, բայց ամուսնական կապը անխելի պիտի
մնայ, քանի որ կայ օջախը: Անհատական կամեց
զրկված ամուսնները, ճիշդ է, թաղան, տան
մուկ սրտանկներում, տանջվում են, բայց չեն
կարող ընտանեկան պատիւը աղարտել երկպա-

կայ կազմված, որ գործում է և փորձում է հարկերը լրացնելու համար արշալույսը սկսել պատրաստվելու դեպքում և մասնաճյուղի աշխատանքը արդեն իսկ սկսվել է։ Այսպիսով, մի քանի օրվա ընթացքում, որ Պարսկաստանի գործառնականության համար անհրաժեշտ է գտել, մինչև այդ չը գիտենք էլ թե ով է հայոց պատրիարքը։

Երևոյթը չափ հասկանալի է։ Իզմիրեանի պատրիարքությունը սկզբից «Մշակի» մէջ տպված բազմաթիւ թղթակցութիւնների, յօդուածների մէջ բաւականաչափ պարզված է այն իրողութիւնը, որ Իզմիրեանի ընտրութեամբ Կ. Պոլսի է-ֆէնդիական դասը, օրինաբար մի ահապին պարտութիւն կրեց, վաղուցով ազգային բոլոր պաշտօններէն։ Այսպիսով Կ. Պոլսի պատրիարքարանից վերացաւ Արքեպիսկոպոսի ղեկավարութիւնը, որ այն պիտի եռանդով պաշտպանուէր էին նրա աջակցութեամբ։ Նուրբան, Մազազուտ, Ունեան, Ալֆէ-բեան, Երուսաղէմի և այլն։

Այժմ էֆէնդիները դուրս են բարձրացնում։ Արքեպիսկոպոսը չը կայ, բայց կան նրա օգնականները։ Մի բան է միայն պակասում, այն, որ Արքեպիսկոպոսի փառաբանող ստոր լրագրիները, սկսեն այժմ ուղղակի կամ անուղղակի կերպով պաշտպանել էֆէնդիներին։ Եւ դա անպատճառ չը լինի, եթէ արդէն չը կայ։

ՕԳՆՈՒԹԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Ահա թէ ինչպէս է նկարագրում «Հայրենիքը», թէն զայն լեզուով, օգնութեան տեսարանը։

«Եթէկ այցելեցինք Գում-Գաբու, տեղեկութիւններ առնելու համար այդ հայաշատ կենդանուն մէջ տեղի ունեցած թարեգործական ձեռնարկներու մասին։ Մեծ գոհունակութեամբ տեսանք որ այս թաղին մէջ թէն նոր սկսուած է կարօտեալներուն համար հանդերձ, ճերմակեղէն և նպաստ հաւաքել, այսուհանդերձ քիչ օրուան մէջ մեծ արդիւնքներ ձեռք բերուած են։

«Այս բարեգործական ձեռնարկութեան գլուխ կեցած է թաղական խորհուրդը, որուն ղեկմանքը մեր փառաբան տեղեկութիւնները քաջելու համար։

«Մայր-Եկեղեցիի կիներուն օգնութեամբ, որ երկրպագութիւն ի մեր իբրեւ աղէկներու վարժարան կը ծառայէ, հիմա փոխուած է գործատեղիի մը և միջնակարգի։

«Աղջիկներու վարժարանին դասերը առժամայ կերպով դադարեցուցած են և աշակերտութիւնները ու վարժութիւնները, իրենց յօթար կամըովը, կաշառան հին միմիայն այդ բարի գործին համար։

«Երբ քաճարէն ներս մտանք, հարկերի չափ աշակերտութիւններ, ոմանք դասը, ոմանք տաճարին մէջ և ոմանք վերնատունը, եռանդուն գործունէութեան մը մէջ գտանք։

«Վերնատունը յատկացուած է նուիրուած հին հանդերձներուն և ճերմակեղէններուն։ Այդ լաթերը հին հաւաքուելիք ենքը, նախ և առաջ՝ Կաթիկոս Գեորգիոսի կապանկաւորին և յետոյ կարկուտի պէտքը ունեցող լաթերը կը նորոգուին։

«Այս գործողութիւնները լինուելու համար պղծական ջանքեր կը ցուցնենք։

«Երբ ինչպէս ասացինք, աւելի մեծ պարտաւորութիւններ ունի դէպքը։ Եւ այդ շատ հասկանալի պատճառով։ Եթէ օջախը ներկայացնում է ընտանիքի հին, նահապետական ձիւր, եթէ նա տնտեսութեան, պատուի, բարոյականութեան հասկացողութիւններն է ամփոփում իր մէջ, ապա ուրեմն, կինը իբրեւ այդ հասկացողութիւնների հիմք, իբրեւ մի տարր, առանց որի անհնարին է ընտանիքի, շատ պատմականապէս և շատ ծանր դեր պիտի կատարէ։ Եւ ճշմարիտ, նա պահպանող, հաւաքող, դարգացնող գործօնն է։ Երբ նա մեռնում է, տղամարդը բերում է մի

պղծական ծրարներու մէջ կը կապուին։ Ամէն մէկ ծրար կը պարունակէ բանիմաստ մը, բայց մը, բաճկուն մը, զոյգ մը կոշիկ, ֆէն, շապիկ և այլն, վերջապէս մարդ մը հագուելու համար պէտք եղած ամէն հագուստները։ Այս պղծական ծրարները յետոյ միանալով հակեր պիտի կազմեն զրկուելու համար կարօտեալներուն։ Մինչև հիմա հաւաքուած հանդերձներով ու ճերմակեղէններով կարելի պիտի ըլլայ պատրաստել հազարի չափ ծրար։

«Այս գործունէութիւնը կարծենք շատ աւելի լաւ է քան հագուստի ամէն մէկ մասերը զատ զատ հակերու մէջ կապելը, ինչպէս ուրիշ թաղերու մէջ կընեն։ Բաշխումին մեծ դեր ունի կընծայէ այդ պղծական ծրարներու ձեռք։

«Շատ հայ վաճառականներ և խանութպաններ ինքնաբերաբար կամ պարզ հրաւերի մը վրա փութացած են ծրարներով կերպաս ու ճերմակեղէն նուիրելու։ Երկուստեք ինչի մը փոխարէն, դասին մէջ զատ բաժանում մը ըրած են, սեղաններով ու կարի մեքենաներով լեցուած, ուր թաղերի տիկիներն և օրիորդներ կուգան ու այն նուէրներէն հագուստներ կը ձեռն ու կը կտրեն։ Երկու օրուան մէջ պատրաստուած է 150 խոլիս, 100 բանդալան, 100 շապիկ, 100 շրջագլուխ։

«Այս 100 շրջագլուխը մասնաւորապէս պատրաստուած է 6-էն 12 տարեկան աղջիկներու համար։ Դեռ այդ քանակութեամբ հանդերձ պատրաստուելու համար պէտք եղած կերպաս ու ճերմակեղէն կը գտնուի և նուէրները կը շարունակեն զայ մէկ կողմէ։

«Արեւոյ կարերը միայն տաճարին մէջ չէ որ կըլլան, այլ հին ձեռքի կտորներ կը զրկուին։ Դասական ընտանիքներու տունները և հին ևս կը կարծին։ Գում-Գաբուի մէջ հարկերի չափ ընտանիք կայ այս միջոցիս որ օրն ի բուն կարօտեալներուն հանդերձ կարելով կը զբաղի։

«Երբեք օրընդ մի մը շատերը սկսած են նաև կապուելու առթիւ ըլլուելու անպէտ ծախքներու փոխարէն կարօտեալներուն հանդերձ և ճերմակեղէն շինուելու համար դրամական նուէրներ ընել։ Գում-Գաբուի թաղական խորհուրդին Այս նուիրատուութիւններուն գումարը մինչև երէկ 2000 զրուլի հասած էր։

«Գում-Գաբուի թաղական խորհուրդը տեսնաւ որ խիստ մեծ փութաշարժութիւն մը ցոյց կուտար այս բարեգործական նպատակին համար։ Թողնէր երիտասարդութիւնը ևս ձեռքերը կապած չէ կեցած և մասնաւորապէս Լիան էֆ. Բանիկեան, վարժարաններու նախորդ հաջաբանուն, իր բոլոր եռանդուն գործունէութիւնը նուիրած է այս կենսական գործին։

«Յաջողութիւն կը մաղթենք իրենց»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Ա Մ Օ Թ Է

II

Եւ լսել և կարգացել եմ, թէ ինչպէս գիւղացիները, որոնք դատաւարութեան են մարմնական պատժի, անհասկանալիութեան են դիմել։ Չեմ կարող չը հաւատալ այդ դէպքերին, որովհետեւ

ուրիշին, որը պիտի չարունակէ նոյն ծառայութիւնը օջախին։ Իսկ երբ մեռնում է տղամարդը, այն ժամանակ կըլլէ պիտի մենակ կատարէ այն ամենը, ինչ հարկաւոր է ընտանիքի ամբողջութեան համար։ Նա աշխատում է, չարչարում է թէ զորում և թէ ներսում, նա համարաւոր է, համ կնիկ։ Մոռացած ամեն ինչ, աչքի առաջ ունենալով միայն օջախը, նա շատ անգամ դառնում է նոյնպիսի չարքա՝ և տանջվող արարած, ինչպէս տան դրատը։ Եւ այդպէս նա շարունակում է տարբեր, մինչև կեանքի վերջը։

Ահա թէ ինչ հասկացողութիւն կար նահապետական ընտանիքում։ Ահա թէ ինչու ամուսնական անհասկանալիութիւնների խնդիրը այնքան անհասկանալի է։

Այժմ վերանում է ընտանիքի նահապետական նոր ժամանակի պահանջները հասնում են ամեն կողմանի կարգի։ Ուստի տարածվում է նախադրանքներ հեշտացում են երթնակութիւնը, մարդիկ չլինում են միմեանց հետ, փոխում են իրանց կեցողութեան պայմանները։ Ահա արդէն իրողութեան, անհասկանալիութեան հասկա-

նքս տեսել եմ ինչպէս մի 40 տարեկան գիւղացի լաց եղաւ, երբ իմ տուած հարցին հարկաւոր լաց եղաւ պատասխանել, թէ այն, ինքը, երբեք չէ մարմնական պատժի։

Գիտեմ և այսպիսի դէպք։ Իմ ծանօթ մի պատուելի, հասակ առած գիւղացի պէտք է բողբոջ հարուածվէր այն պատճառով, որ նա, ինչպէս լինում է սովորաբար, հայտնել էր տանուէրին, ուղարկելին չը դարձնելով, որ վերջինս պետական նշանն ունի իր վրա։ Նրան բերին գիւղական վարչութիւնը և այնտեղից տարան այն տեղը, ուր կատարվում էին վճիռները։ Եկաւ ծառան ճիւղատնակում և գիւղացին հանվելու հրաման ստացաւ։

«Պարմէն Երմիլի, ավր ես ամուսնացած որդի ունեմ,—ամբողջ մարմնով դողալով ասեց գիւղացին տանուէրին։—Մի՞թէ կարելի չէ առանց սրան։ Այս օր մեղք է։

«Ինչպիսիք ինչ է, Պետրովիչ, ես ուրախ կը լինեի, եթէ չը լինէր, բայց ինչ արած,—պատասխանեց չիտիված տանուէրը։

«Պետրովիչը հանվեց և պտակեց։

«Քրիստոս համբերել է և մեզ էլ նոյնը հրամայել, ասեց նա։

Ինչպէս պատմում էր ինձ այդ անգին ներկայ եղած գրագիրը, ամենքի ձեռքերը դողում էին և նրանք չէին համարձակվում միմեանց աչքին նայել, զգալով, որ մի ինչ որ սարսափելի բան են կատարում։ Եւ ահա այդ մարդկանց են անհրաժեշտ և, երևի, ինչ որ բանի համար օգտակար համարում ձեռքը, ինչպէս կենդանիներին, թէն կենդանիներին էլ տանջելը արգելված է։

Մի ահապին քրիստոնէայ պետութեան մէջ, Քրիստոսից 19 դար յետոյ, օրէնքների խնդարման գիմարելու համար չը գտնվեց մի աւելի օգտակար, խելօք և բարոյական միջոց, բայց միայն այն, որ օրէնքները խնդարող մարդկանց, հասակաւոր և երեմն նոյն իսկ ծեր մարդկանց, տկուրացնելու, յատկապէս վրա վայր գցել և ճիւղատնակում ձեռքը։

Եւ մեր ժամանակի մարդիկ, որոնք իրանց համարում են շատ առաջաւոր, այն մարդկանց թուաները, որոնք 75 տարի սրանից առաջ ոչնչացրին մարմնական պատժի, այժմ ամենամեծ յարգանքով և բոլորովին լրջօրէն խնդրում են այն մասին, որ քիչ ձեռքն ուսուցչական խնդիրները կատարուէր միայն յայտնի պայմաններին մէջ։ Եւ մեր ժամանակ, մեր հեղ և քրիստոնէաբար կրթված ժողովրդի մէջ հասակաւոր մարդկանց ձեռքը այդպիսի արարքների տեսակին է պատկանում։ Անկարելի է այդ բանը ցնչելու համար մոռանալ հարցին առողջապահութեան, դպրոցական կրթութեան կամ մանկ-ֆէստի կողմից։ Այդպիսի գործերի մասին կատարվում է կամ ոչինչ չը խօսել, կամ թէ խօսել

բայց միթէ կարելի է այդ մասին խոսել։ Մի-թէ այդ մասին կարող է և հարց լինել։ Այս կան արարքներ, որոնք մասին չէ կարելի գտնել ստորագրութեամբ, դատաւարակալով այդ արարքների կատարումը միայն յայտնի պայմաններին մէջ։ Եւ մեր ժամանակ, մեր հեղ և քրիստոնէաբար կրթված ժողովրդի մէջ հասակաւոր մարդկանց ձեռքը այդպիսի արարքների տեսակին է պատկանում։ Անկարելի է այդ բանը ցնչելու համար մոռանալ հարցին առողջապահութեան, դպրոցական կրթութեան կամ մանկ-ֆէստի կողմից։ Այդպիսի գործերի մասին կատարվում է կամ ոչինչ չը խօսել, կամ թէ խօսել

ցողովութիւնները ցնչում, ոչնչացնում են ամեն տեղ օջախի նահապետական նշանակութիւնը։ Այժմ այլ ևս հիմնարկութիւնը չէ կարող պահանջել զանոթութիւններ, քանի որ նա կորցրել է իր նշանակութիւնը, քանի որ ընտանիքի ամբողջութիւնը հաստատվել է ոչ թէ պաշտամունքի վրա, այլ անձերի փոխադարձ համակրանքի վրա։

Եւ այժմ, ի հարկէ, ամուսնական յարաբերութիւնների հրատապ խնդիրը պիտի օրէցօր բարդվի, մեծանայ։ Անկարելի է ուրանալ այդ իրողութիւնը։ Այս ուրեմն պէտք է կամայ ակամայ հաշտվել այն մտքի հետ, որ հարկաւոր են որոշ, հաստատ օրէնքներ։ Եւ մինչև չեն լինի դրանք, մինչև հնադարեան կարգերն ու հասկացողութիւնները կը համարվեն անխելագան, ամուսնական զօրքը իր գործը կանչէ, ամեն տեղ կը տեսնենք անբաւականութիւններ, ամեն տեղ ապրիի կենսակցութիւններ, ջարդված բախտ, արեւնոտ սրտեր։

Երբ օրէնքները չեն կարողանում խելացի կերպով լրացնել կենսի պահանջները, այն ժամանակ առաջ է գալիս ցուալի դրոթիւնը, օրէնքը չէ կարողանում պահպանել իր ոյժը, մի

շատ էսթետիկ և միշտ զգուշացնող և սարսափով։ Այդպիսի գործերի մասին չէ կարելի ամենամեծ յարգանքով խոսել։ Գործերը, այդ տեսակի գործերը կարելի է և պէտք է միայն մեղադրել։ Պէտք է այն պատճառով, որ այդ գործերը, երբ նրանց տուած է օրինականութեան կերպարանք, ամօթաւոր են դարձնում մեղ ամենքիս, որ ապրում ենք նոյն պետութեան մէջ, ուր այդ գործերն են կատարվում։

«Պետրովիչը, որ պատկեց բողբոջի հարուածներին տակ, երեսին խաչ հանելով և տակալով՝ «Քրիստոս համբերել է և մեզ էլ նոյնը հրամայել», ներքեց իրան տանջողներին և ձեռքից յետոյ մնաց նոյնը, ինչ որ էր։ Մի բան, որ գոյացրեց նրան մէջ նրա վրա կատարված ձեռքը,—այդ ատուութիւնն էր դէպի նրանց, որոնք այդպիսի պատժներ են գործադրում։ Բայց շատ երիտասարդ մարդկանց վրա ոչ միայն ինքը պատժը, այլ յաճախ նոյն իսկ գիտակցութիւնը թէ՛ պատժը կարելի է, ազգում է՝ ստորագնելով նրանց բարոյական զգացմունքը և զրգուելով երեմն յուսահատութիւն, երեմն և դադանութիւն։ Բայց դեռ այդ չէ պատժի զըլ-խաւոր յետոյ։ Գլխաւոր յետոյ այն մարդկանց հոգեկան դրոթեան մէջ է, որոնք սահմանում են, ինչպիսիք են, հրամայում են գործադրել այդ պատժը, այն մարդկանց, որոնք օգտվում են նրանով, ինչպէս մի պատշաւիչով, և բոլոր այն մարդկանց, որոնք ապրում են այն համոզմունքի մէջ, թէ արդարութեան և մարդկայնութեան այդ աղաւաղումը հարկաւոր է մի լաւ, կանոնաւոր կենսի համար։ Ինչ տարածվելի բարոյական պայմաններին պիտի տեղի ունենայ այնպիսի, շատ անգամ երիտասարդ մարդկանց խելքում և սրտում, որոնք—եւ ինքս եմ լսել—գործնական խորամուկ իմաստութեան ձեռք տուած են, որ դա լաւ է մեծիկի համար։

Ահա հենց այդ մարդիկ ամենից աւելի ավտոսելի են այն զազանութեան համար, որի մէջ են ընկել նրանք և որի մէջ ընդգրկւած են։

Եւ այս պատճառով ուսուցչական ժողովուրդը մարմնական պատժի ապականող ազդեցութիւնից ազատելու ամեն կողմից ահապին, կարեւոր գործ է։ Եւ այդ ազատութիւնը տեղի կուտենայ ոչ թէ այն ժամանակ, երբ մարմնական պատժի չեն ենթարկվի ուսում աւարտանները կամ թէ գիւղացիների մի այլ մասը և կամ թէ բոլոր գիւղացիները, թէ՛ կուղ մի հատի բացառութեամբ, այլ միայն այն ժամանակ, երբ ամենքը կը խոստովանեն իրանց մեղքերը և հեղափոխութեամբ կապալխարեն։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

«Съвер. Вѣстникъ» ամսագիրը, իր յոշնակարի համարում, խօսելով այն արշաւանքի մասին, որ մի քանի ուս լրագրիներ սկսել են կուլիսի աղգութիւնների դէմ, հետեւել կարծիքն է յայտնում։

«Новое Время» լրագրի մեղադրական ակտը հայերի դէմ ամբողջ երեք ֆելիետոն տեղ է բռնում։ Այդ մեղադրական ձառի մէջ հայերի ձգտումը՝ տիրապետել ուրիշ ազգութիւնների վրա համարվում է իբրեւ բնական, հայ ազգի պատմական առանձնապատկերի։ Այդպէս են

կողմ է քայլում, իսկ կենսի առաջ քաշած դրոթիւնը, եթէ կարելի է այդպէս ասել, ապ օրէն օրէն կերպարանք է ստանում։

Մասնաւոր ցուալի է, որ կղերական դասը, նա, որ կարող է կարգաւորել այդ անբնական դրոթիւնը, չէ ուղում հասկանալ իրերի ընթացքը և սկսում է իրան խաբել զանազան համեմատութիւններով։ «Բազմալեզու» ոչինչ է համարում ամուսնական զօրքը։ Նա գիտէ որ աշխարհի դրոթիւնն է այդպէս, շատ մարդիկ, բոլորովին անմեղ, կոտորվում են պատերազմի մէջ, «որպէս զի բոլոր աշխարհը խաղաղ և երջանիկ ապրի»։

Երանի ձեռք, Միլիթարեան հայերը, որ այդպիսի հասկացողութիւն ունենք պատերազմների մասին։ Բայց քանիսին կարող էր հաւատացնել թէ այդ պայման է։

Իսկ մեղք կանոն բոլորովին հակառակը։ Ինչպէս պատերազմները ազգերի երջանակութեան համար չեն, այլ միմեանց ոչնչացնելու, միմեանց ձեռքից մի կտոր հող, մի ապրուստ խելու համար, այնպէս էլ ամուսնական զօրքը ոչ մի երջանակութիւն չէ կարող հաստատել։

